ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/105

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.07.2018թ. թիվ 03/26-3/12569-18 գրությամբ «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ին (ՀՎՀՀ՝ 71705951) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի 02.07.2018թ. գրության հիման վրա, 11.07.2018թ. նախաձեռնել է «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ին (այսուհետ՝ նաև ԱՁ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. «Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.07.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՏՄԲՔ-ԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ն 21.06.2018թ.՝ ընթացակարգի հայտի ներկայացման օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 80,408 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ն Բողոքներ քննող անձին ուղղված 14.07.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«21.06.2018թ.՝ գնանշման հարցման հայտը ներկայացնելու պահին, հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից անձնական հաշվի քարտի քաղվացքի տվյալների համաձայն՝ Անուշ Մելիքբեկյան ԱՁ-ն հարկային պարտավորություններ չի ունեցել (միասնական հաշվի մնացորդը՝ 13,582 ՀՀ դրամ): Քանի որ շահութահարկի կանխավճար ԱՁ-ն վճարում է սկսած 01.01.2018թ.-ից եռամսյակային,

վճարման ժամկետը պարզապես մոռացել ենք, առանց որևէ դիտավորության: Պարտքը մարել ենք տեղեկանալուց անմիջապես հետո՝ 27.06.2018թ.:

Նախկինում ևս հարկային պարտավորությունների մարման հետ կապված խնդիրներ չենք ունեցել, ավելի հաճախ ունեցել ենք գերավճարներ:

Հաշվի առնելով ԱՁ-ի աշխարհաքաղաքական դիրքը, շուկայի փոքր ծավալները, համոզված եմ, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը կհանգեցնի Անուշ Մելիքբեկյան ԱՁ-ի շրջանառության անկմանը և ԱՁ-ն կհայտնվի ֆիմնանսական լուրջ խնդիրների առաջ»:

ԱՁ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.07.2018թ. թիվ 03/26-3/12569-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի 02.07.2018թ. գրությունը, «ՀՀ ՏՄԲՔ-ԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՏՄԲՔ-ԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.06.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ն Բողոքներ քննող անձին ուղղված 14.07.2018թ. գրությունը, ԱՁ-ի ներկայացրած հայտը.

«Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար ավտոդողերի և ավտոպահեստամասերի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՏՄԲՔ-ԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ն՝ 1-ից 10-րդ չափաբաժինների մասով:

ԱՁ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՏՄԲՔ-ԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 21.06.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ի կողմից ըստ չափաբաժինների ներկայացված առավելագույն գնային առաջարկը 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով համապատասխանաբար կազմել է 80,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և 20,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության 1.5 կետի 1.5.1 ենթակետով Հանձնաժողովը որոշել է՝ Ընթացակարգի 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ին, իսկ նույն կետի 1.5.3 ենթակետով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 80.408 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման

չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ ՏՄԲՔ-ԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Karine_Sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող

ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.19 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 21.06.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 80.408 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ, ըստ «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշման՝ նշված ժամկետանց պարտավորությունն

առաջացել է վերջինիս կողմից շահութահարկի կանխավճարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ՀՀ ՏՄԲՔ-ԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին ԱՁ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.07.2018թ. թիվ 03/26-3/12569-18 գրությամբ «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ին (ՀՎՀՀ՝ 71705951) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Անուշ Մելիքբեկյան» ԱՁ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ